


ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ա. ԵՐԵՄՅԱՆ

ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ՍԱՐԳԻՍ ՊԻԾԱԿ (14-րդ դար)

1. 12—14-րդ դարերի ԶԱՐԱՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՁՔԵՐԸ



ոնդոլական գերիշխանության ժամանակաշրջանը՝ 12—14-րդ դարերը, Հանդիսանում է Հայոց պատմության ամենահույզը ու մուայլ մի շրջանը:

Մոնղոլները, իրենց արշավանքների ժամանակ, Հայ ժողովրդին ո՛չ միայն տնտեսական ծանր շահագործման են ենթարկում, այլև մեկը մյուսի հոտեց հրկիզում են Հայաստանի պյուղերը, ավերում են ավանները, քանդում են վաճառաշահ, ծաղկուն ու շենքագները՝ Անին, Կարսը, Դվինը, Կարինը և այլ վայրեր, իսկ բնակիչներին գերիվարում են կամ կոտարում: Այդ ժամա, կործանիլ ու զաժան քաղաքականության հիմքանքով քայլայլում է Հայաստանի տնտեսական հյանքը և բնակչության նյութական վիճակը: Հայ ժողովրդից շատերն այն աստիճան աղքատանում են, որ չեն կարողանում պահանջված ծանր հարկը վճարել, և անօրենները պարագի փոխարեն առնում են նրանց հարազատ զավակներին: Այդ ժամին թանկագին մի վավերագիր է 13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցու հիտկայալ վկայությունը.

«...Եւ յամեննեցունց պահանջեալ խստագոյն հարկս, աւելի քան զկար մարդուն, և սկսան շքաւորիւ, և նեղէին անհնարին կոտանօք և շարշարանօք և գելոցօք. և որ թագչէր՝ ըմբռնեալ սպանանէին, և որ ու

կարէր հատուցանել զսակն՝ զմանկունս նոցա առնուին ընդ պարտուցն...»¹:

Սա 1254 թվականին Հայաստան ուղարկված Հարկահավաք Արդունիի հարկահանության պատկերն է:

Ահա՝ մի այլ ցայտուն և պիրճախոս նկար, Դա այլազգիների անիրավությունները և Հայ ժողովրդի 1295 թվականի թշվառությունները պատկերող արժեքավոր մի փաստաթուղթ է, որ մեզ ավանդ է թողել 13-րդ դարի վերջերին և 14-րդ դարի սկզբներին ավրող տաղանգավոր բանաստեղծ Ֆրիկը: Իր հոչակավոր «Գանգատ»ի մեջ նա դառն կսիծով դրել է.

«Ել կամք ի ձեռա անօրինի,

Որք կու վարեն անգին գերի,

Ո՞րքան քակեն եկեղեցի,

... Քանի՞ կանայս առնեն ալրի,

Եւ ո՞րքան որք քրիստոնէի,

Ո՞րքան արին հեղան յերկրի,

Քանի՞ առնեն բան խոտելի:

Ո՞րքան տանջեն զմեզ յաշխարհի

Եւ կեղեքն զկեանս մեր յայտնի»:

Մոնղոլ բռնակալների Հարկային ծանր լուծի, կեղեքութների և ժողովրդի զրկանքների մասին փաստական տեղեկություններ արձանադրել են նաև զեպքերին ականատես այլ գրիչներ: Այդ տեսակեալից թանկագին

1. «Կիրակասի Գանձակեցոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1909 թ., էջ 348—349:

մի աղբյուրը է Դանիել
Աղթամարեցու 1307
թվականին Աղթամա-
րում գրած Հիշատա-
կարանը,ուր կարդում
ենք այսպիսի տողեր.

«Եւ արդ, ես՝ ու-
նախս և դատարկս ի
գործոց բարեց, ներ-
փանաք և փցունս ի
գրչաց Դանիել սուտ-
անուն կրանաւոր, ե-
ղեգնագիծ դրոշմեցի
զսա իմով մեղսա-
մած մատամբս ըստ
իմում տկարութեանս,
ի դառն և ի տարտա-
րուս ժամանակիս, յո-
րում զարդացաւ ազգն
իսմայէլի անշափ, մինչև դարձուցին լիւ-
րեանց մասուի յոյսն
զամենայն ազգն նե-
տողաց... Եւ նեղին
զամենայն քրիստո-
նեայք դամնալ ի
պատիր յոյսն իւ-
րեանց, զոմն նեղին,
տաճշեն, զոմն սպա-

նանին, զոմանց զինչան յափշտակեն...
այլ և եղին ի վերայ ամենայն քրիստո-
նէիցս հարկս և նշանս նախատանաց՝ ի
վերայ ուսուց թիկանցն կտաւա սեաւա, զի
որք տեսցեն զնոսս՝ ճանաշեսցեն եթէ
քրիստոնիայք են և հայոյիսցեն. և ամե-
նամին ջանան, զի մի՛ երեսցի քրիստո-
նէութիւն ի վերայ երկրին²:

Որ հայ ժողովրդի իսկական ճշգրիտ
պատմությունը գրելու համար ձեռագրերի
հիշատակարաններն անգնահատելի աղ-
բյուրներ են, դա անժխտելի է: Դրանցից մհծ
արժեք է ներկայացնում Սարկավագ գրչի
1310 թվականին, Հովհաննավանքում, վրա-
ցի իշխանուհի Մամախաթմունի համար
գրած ավետարանի հիշատակարանը, ուր
կան ցալտուն տվյալներ հայ ժողովրդի
դառն կացության, բնաջնջման, ծայր աս-
տիճան թշվառության, նույնիսկ որդիների
վաճառման մասին: Ահա՝ մի փոքրիկ նկար.

«... Բայց զաղէտ և զողը տարակուսա-
նացս ո զինչ պատմեսցէ, զի ի խիստ և
յանձնարին հարկապահանջութենէ ծա-
խել լինին ուստերք և դատերք աշխար-

2. «Կողումն ընծայութեան իւրդի», երեան



Ինչնանկար Սարգիս Պիծակի

(Հայկ ՍՍԻ Պետական մատենադարանի
№ 2627 ձեռագրեց)

պակինի և ոչ տեղի ապաստանի. և էր
աշխարհ յամենայն ի տառապանք և ի
հարկապահանջութիւն և ի սպառ նուս-
գեալ էր ազգս Հայոց: Եւ ի քաղաքիս յայս-
միկ ի Թէավոյպավիս քակեցին եկեղե-
ցիք բագում, և ոմանք, թողեալ զհաւասու
որ ի Քրիստոս, և զնացեալ զհետ մնօրի-
նաց իսմայէլացոց ազգի, և այլք, վաճա-
ռեցին զողաց իւրիանց, և ինքիանք փա-
խաւցեալք յալլ և ալլ տեղիս, և ոչ ուրեք
գտանիւր տեղի ապաւինի. և ալլ բազում
վիշտ և տառապանս, որ կայր ի վերայ
աշխարհի վասն մեղաց մերոց»:

Մի հանգամանք պարզ է, որ թաթարա-
կան տիրապետությունը, Եղիպատոսի սուլ-
թանական արշավանքները և ներքին կրոնա-
կան անմիտ երկպառակությունները Հա-
յատանի բնակչության քաղաքական ու
տնտեսական կյանքին և հայ մշակույթին
ժանը կերպով հարվածում են: Սակայն,
փաստ է և այն, որ օտար հարձակումներն
ու գերիշխանությունը հայ ժողովրդի ստեղ-
ծագործող ոդին շին կարողանում մեղցնել:

2. ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏԿԵՐԸ 12—14-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Հակառակ ստեղծված ծանր պայմաններին, 12—14-րդ դարերում Հայաստանում մշակութային կյանքը ոչ միայն կանգ չի առնում, այլև նոր երանք է ստանում: Այդ դեղեցիկ երեսովի համար պարտական ենք դարաշրջանի մի շարք լուսամիտ, գիտակից և լավագույն մշակներին, որոնցից ուժանք գործի ներշնչողը, ունանք էլ հայ մշակույթի առջվրաներին են հանդիսանում: Ահա այդ պայծառ դեմքերից կը ունի Բ. Թագավորը, որ Կիլիկիայում մի շարք բարենորոգումներ է մտցնում: Նույն պատմաշրջանում բացվում են նաև նորանոր դպրոցներ, որոնցից հընդակվում են Ակների, Սկևուալի, Սսի, Դրազարկի և այլ ուսումնարանները, իսկ Հայաստանում առանձնապես մեծ համբավ են վայելում Սանահնի, Տաթևի, Հաղպատի, Նարեկի և այլ դպրոցները, որոնք հայ գրականության, արվեստի և հասարակական մաքի զարգացման փայլուն կենտրոններ են հանդիսանում: Այդ լուսավոր տաճարներում սովորում են հայ մշակույթի վաստակավոր դեմքերից շատերը, որոնք իրենց ստեղծագործություններով գարել են տալիս ժամանակի ոչ միայն պատմագրությանը, այլև իրավաբանական, գիտական, գեղարվեստական գրականությանը և հատկապես տաղերգությանը, որ միջնադարյան հայկական բանաստեղծության մեջ ուրույն տեղ է դրավում:

12—14-րդ դարերում առանձին փայլ են ստանում նաև ժողովրդական բանահյուսության էջերը, որոնց մեջ ուրույն տեղ են գրավում պանդխատական տաղերը, աշխատանքային երգերը, առածները և հեքիաթները:

Հիշատակության արժանի են նաև նույն դարաշրջանի պատմագիրները, որոնց շարքում փայլում են՝ Կիրակոս Գանձակեցի, Վարդան Բարձրաբերդցի, Ստեփանոս Օրբելյան, Մաղաքիա արելա, որոնք նկարել են սելչուկների ու մոնղոլների ավերածությունների պատկերը և բողոքել Հայաստանը տնտեսական անկման հասցնող նրանց դաժան քաղաքականության դեմ: Ահա թե ինչո՞ւ հայ և Անդրկովկասի ժողովարդների, ինչպես նաև Մերձավոր Արևելքի 12—14-րդ դարերի քաղաքական ու տնտեսական պատմության համար հայ պատմագիրների ստեղծագործությունները խոչըն արժանակություն ունեն: Էլ շնորհ նշում 12-րդ դարի պատմաբան Մատթեոս Ռուհյացու ժամանակակից խոսակցական ոճով ու շատ պարզ, հասարակ լիզվով գրած հետարքիր ժամանակակից գրականությունը, ուր նա խոր ատելությունով արտահայտ-

վում է հույների կրոնական հալածանքների ու մահմեդական բանակաների դեմ, միաժամանակ առանձին ոգևորությամբ պատմում սկզբանցիների քաշագործությունները:

Հայ պատմիչների հետ հանդիս են գալիս նաև հոչակավոր տաղերգումներ: 12-րդ դարի հայ գրականության ամենափայլուն մշակներից արձանագրենք նախ Ներսես Շնորհալու հմայիչ անունը (1102—1172 թ. թ.), իր ժամանակի հանճարեղ բանաստեղծը, որ հայտնի է ոչ միայն իր բազմաթիվ շարականներով — «Նորահրաշ պատկաւոր» (Ղարդանանց ներբաղերգը), «Առաւօտ լուսոյ», «Աշխարհ» ամենայն», «Նորաստեղծեալութ», — այլև ժողովրդական լիզվով ու ոճով գրած 120 հանհելովներով ու առակներով: Առանձնապես ընդգծներ նաև նրա «Ողբ եղիսիոյ» գեղարվեստական արժեքավոր պոեման³, որի ժամանակի գրականության մեջ մի նոր շարժում է առաջ բերում:

Այսուհետեւ, 13-րդ դարում, փայլում են երկու նշանավոր նոր բանաստեղծներ — Ֆրիկը և Կոստանդին Երզնկացին, որոնք օգտվելով ժողովրդական բանահյուսության գանձերից, երգում են ոչ միայն աշխարհաբար՝ միշին հայերենով, այլև հայ բանաստեղծական գրականության նվիրում են գեղարվեստական լավագույն էջեր: Նրանցից Ֆրիկն իր լիրիկական ոտանավորներով ոչ միայն արձանագրում է կյանքում տիրապետող անարդարությունները, այլև բոլորում է ժամանակաշրջանի քաղաքական և տնտեսական անհավասարության դեմ: Ահա՝ և Երզնկացին, հայ բանաստեղծական արվեստի խոշոր վարպետներից մեկը, որի ոտանավորները փայլում են իրենց գունգեղ լիզվով ու պատկերավորությամբ: Բնության և սիրո տաղանդավոր այս տաղերգում յուրահատուկ ոճով երգում է իրական կյանքն ու աշխարհը, միաժամանակ պատկերում է կնոջ գեղեցկությունը: Նա գրում է աշխարհիկ մարդկանց համար «բաղրահամ բաներ»: Նա առաջինն է հանդիսանում, որ սկիզբ է դնում սիրային լիրիկային, աշխարհիկ սիրո մոտիվը մըտցընում է հայ քնարերգության մեջ: Դրա համար նա իր ժամանակի խավարամիտ հոգեվորականների կողմից հալածվում է:

3. Գա Հալեսի Զանկի ամիրայի արշավանքի պատմությունն է: Կիլիկիայի առանձների մաս գտնվող ծաղկած նեղսիա քաղաքը, 1144 թվականին, հանգարծակի պաշարվում է Զանկի ամիրայի զրբերից, որոնք անգութ կատարած են ենթարկում բանակի քաղաքի գրականությունը, ուր նա խոր ատելությունով արտահայտ-

Հրապարակի վրա երևում են նաև նշանավոր առակախոսներ, որոնցից 13-րդ դարում իշխում է Վարդան Այգեկցին, որի առակներում տեսնում ենք ժողովրդի իմաստությունը և ժողովրդական բանահյուսության բարձր արվեստը։ Առաջարարակ, նա մեկն է իր դարաշրջանի այն պայծառ, լուսավոր

ֆեոդալներին ու տգես հոգևորականներին։ Դարաշրջանի մի այլ ուշագրավ երևույթն իրավաբանական գրականության նվաճումն է, որի լավագույն զրոշակակիրը հանդիսանում է մի հայ գիտնական։ Դա 12-րդ դարի հուշակավոր օրենսդիր և իրավաբան Միհիթար Գոշն է (Գանձակեցի), պատմա-



Ավետարանի խորան

(Հայկ. ՍՍՌ Գիտական մատենադարանի № 5786 ձեռագրից)

դեմքերից, որ իր հորինած առակներով, անելուաներով և մանր, պարզ վիպական պատմվածքներով իր ժամանակի հասարակական արամագրությունների արտահայտիչն է հանդիսանում և ծաղրի ենթարկում

կան խոչոր արժեք ներկայացնող «Դատաստանագիրք» աշխատության հմուտ հեղինակը, որ մեծարժեք և անմահ եղուսպուից հետո հայ առաջին առակագիրն է, միաժամանակ իր մշակած 190 առակներով գեղար-

վեստական արձակի հիմնադիրը: Նրա շատ սեղմ ու հղկված ոճով գրած առակները գրավիչ են նաև իրենց երգիծաբանական երանգավորումով:

Հիշատակենք նաև 13-րդ դարի կեսերին կազմված Մմբատ Գոմստաբելի «Դատաստանագիրք»ը, որ գործադրվել է Կիլիկիայում:

Պատմաշրջանի գրականության մեջ ուրույն տեղ են գրավում նաև բժշկական գիտության էջերը: Դեռ 13-րդ դարում հանդիս են գալիք մի քանի նշանավոր բժիշկներ, որոնց մեջ համբավ ու հոչակ է վայելում ժողովրդից սիրված և իմաստում մի բժիշկ: Դա Միիթիար Հերացին է, որ ոչ միայն ռամկորին, պարզ, հասկանալի լեզվով հորինում է «Ճերմանց միիթիարութիւն» խորագրով բժշկական գիրքը, այլև զբաղվում է փիլիսոփայությամբ և աստղաբաշխությամբ:

Միիթիարական պատկեր է ներկայացնում նաև հայկական ճարտարապետությունը, որ առանձին զարկ է ստանում: Կառուցվում են հայկական ոճով նոր հուշարձաններ, որոնց մեջ կենարոնական տեղ են գրավում Գոշավանքը, Հաղպարծինը, Սանահնի և Հաղպատի վանքերը, Գեղարդի վիմափոր, նաև Մաղկաձորի եկեղեցիները և այլ կոթողները, որոնք իրենց արվեստով ճարտարապետական խորշոր արժեք են ներկայացնում:

Դա այն դարաշրջանն է, երբ առանձին փայլ է ստանում և ուշագրավ նվաճումներ անում նաև քանդակագործական արվեստը, իրենց նրբությամբ հայտնի են Գոշի խաչքարերի քանդակները և Մյունյաց բարեկիները:

Բնորոշ է, որ դարաշրջանի երաժշտական արվեստը ևս նոր երանգ է ստանում: Այդ հանգամանքը հաստատում են 13-րդ դարի մատենագիր Կիրակոս Գանձակեցու պատմության մեջ արձանագրված տողերը, որոնք ընդգծում են, թե երաժշտական խաչքերը փոքր Ասիայից կամ Հունաստանից առաջին անգամ Հայաստան բերող Խաչատուր վարդապետ Տարոնեցին: 12-րդ դարում ձայնագրում, խաղավորում է շարականիքից «Խորհուրդ Խորին»ը և հոգեոր այլ տաղեր: Եր Շերաժշտական արվեստով նա իր ժամանակակիցների շրջանում շուտով մեծ հոշակ է ստանում: Նրա անունն այսօր կապված է հայկական հին խաղերի շահեկան և հետաքրքիր ձայնագրության վերջնական կազմակերպման հետ:

Միշնադարյան հոգմոր երաժշտության պատմության էջերն արձանագրելիս նշենք իր ժամանակին հոչակված մի երաժշտա-

թետի պայծառ դեմքը ևս: Դա 12-րդ դարի փայլուն արվեստագետ, հայոց կաթողիկոս Ներսիս Ծնորհալին է, որ հայ գրականության պատմության մեջ հայտնի է, ինչպես գրել ենք, որպես խոշորագույն բանաստեղծ: Նրա ստեղծագործություններից հիշենք նաև «Ճիշտու Որդի», «Բան հաւատոր» և ուրիշներ: Արժեքավոր են նաև նրա «Վասն ուրախութեան մարդկան» հյուսած 120 հանգավոր հանելուկները, գրված ժողովրդի խոսած բարբառով: Սակայն, Ծնորհալու ստեղծագործական արժեքը բարձրացնում են նաև նրա հորինած շարականները, տաղերն ու գանձերը, որոնցից ումանք կրում են արարական երաժշտության խոր ազդեցությունը: Նա է ձայնագրել «Ալուատ լուսոյ», «Անալիաց սիրով», «Աշխարհ ամենայն» և այլ եկեղեցական երգերը:

Գծենք 13-րդ դարի մի այլ նշանավոր երաժշտագետի նկարը: Դա երգահան Հուսեփին է: Գրչագիր Հովհաննեսն իր 1241 թվականին գրած տաղարանի հիշատակարանում թախանձում է հիշել «Երևելի երաժշտագէտ» Հուսեփիին, որ ապրել է Կիլիկիայում, Հեթումի թագավորության շրջանում: Նա լավ ժանոթ լինելով եկեղեցական երաժշտության, խոշոր աշխատանք է կատարում, ստեղծագործելով զլիսավորապես զուտ հայկական ոճով և իր ինքնուրույն արվեստով զարկ է տալիս հոգենոր երաժշտությանը: Սակայն, նա զբաղվում է ոչ միայն հայկական եղանակների ձայնագրությամբ, այլև օգտագործում է պարսկական և ասորական եղանակների ձայները, մի երևոյթ, որը բացառիկ առժեք է ներկայացնում հայ միջնադարյան երաժշտության զարգացման հարցերը լուսաբանելու, որ էականն է, պարսկական, անորական և հայկական երաժշտության փոխհարաբերությունները մեկնաբանելու տհասկեալից:

13-րդ դարում, Ակների պատմական վանքի կամարների ներքո, հայ երաժշտության զարկ է տալիս մի այլ լավագույն երաժիշտ: Դա Մանվելն է, որ իր ժամանակի երաժշտական արվեստի վաստակավոր մշակների շարքում ունի իր համեստ էջը: Նա է, որ Արքայակալնիում Պողոս կրոնավորի գրչով գրված «Թէսոփիլոսի ներբողեան» հոմարենից թարգմանված ճառի ձեռագրերը, իր ուսերի վրա գրած, բերում է ցյերկնալըման սուրբ և աստուծաբրնակ անապատն ի յԱկներն»: Ահա՝ հիշատակարանի վկայությունը.

«... Յիշեսզիք աղտութիւր զաստուածապատուեալ հայրն զՄտեփանոս, զառաջնորդ սովոր ուխտիս Ականց անապատիս. և զծնաւզսն իւր և դիմաստուն երաժիշտ զՄանուէլ, որ ուսաւ իւրով բերաւը եղի ճառիս ի վանս»:

13-րդ դարի վերջին և 14-րդ դարի առաջին շրջանում, Դրագարկի պատմական վանքում փայլում է մի նոր երաժիշտ: Դա Բորսու վանականն է, որ օժոված ինհելով երաժշտական ընդումակությամբ, նպաստում է իր ժամանակի երաժշտության զարգացմանը:

12—14-րդ դարաշրջանների հայկական գեղարվեստի պատմության մեջ առանձնահատով տեղ են գրավում նաև գեղագության և մանրանկարչության արվեստները, որոնց զարգացումն ու վերելքը տեսնում ենք ձեռագրերի զարդանկարչության մեջ: Ուշագրավ է այն, որ մանրանկարչության արվեստը 12—14 դարերում ծաղկում է ոչ միայն Արևելյան Հայաստանի նշանավոր կենտրոններում, որոնց շարգում ուրույն տեղ են գրավում Տաթևը, Գլաձորը, Հաղպատը, Նորավանքը, Բագնայրը, Տարոնը և Աղթամարը, այլև բարձր կատարելության է հասնում Արևելյան Հայաստանի կամ Կիլիկիայի գեղարվեստական կենտրոններում՝ մայրաքաղաք Սոսում, Կարմիր վանքում, Չորրոյ վանքում, Փոս անապատում, Գալու անապատում, Սկևայում, Հոռմկալյում, Դրազրկում և նրա հետ կապված Գոների և Ակների դպրոցներում: Ահա այդ լուսավոր կենտրոններում հայ գոլության արվեստը, գեղագրությունը, նկարչությունը, մասնավորապես մանրանկարչությունը զարգանում են և լայն ծավալ ստանում, երևույթներ, որոնց մասին տաղանդավոր արվեստագետ Գարեգին Հովսեփիյան Վեհափառն իր «Կոստանդին Ա. կաթողիկոս» խորագրով հոդվածում գրել է.

«Փ. դարի երկրորդ քառորդից հետո դրչության և մանրանկարչության արվեստները իրենց բարձրագույն զարգացման շրջանն են ապրում: Ոչ միայն Հոռմկալյայի դպրոցը, կաթողիկոսի անմիջական հովանավորության տակ, տալիս է իր գեղեցկագույն գործերը, այլև Դրազրկի, նորա հետ կապված Գոների և Ակների դպրոցները: Ոչ միայն կաթողիկոսը, այլև Հեթում Ա. և նորա եղբայրները՝ Միքատ



Հովհաննես ավետարանից

(Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի
№ 5786 ձեռագրից)

Գովնդստարլ և մանավանդ Հովհաննես արքաներայր, Վասակ Ճանձու տեր, Լեռն Գ. և թագուհին Կեռան, Հեթում Բ..., Գանդիսանում են արվեստի հովանավորներ և մեկնասաներ: Նրանց օրով մեր գեղագրական և մանրանկարչական արվեստներն իրենց ուսկեղարն են ապրում⁴:

Ահա Կիլիկիայի գեղարվեստական դըպրոցներում իր ժամանակին մեծ համբաւ ու հոշակ են վայելում մի խումբ հմուտ, վարպետ ու ձեսկերպված նկարիչներ, որոնց շարգում պատվավոր տեղ են գրավում բարձր տաղանդով օժոված խոշոր արվեստագետներ՝ Թորոս Ռոսլին, Սարգս Պիծակ, Թորոս Տարոնեցի, Գրիգոր Երեց, Իգնատիոս, Հակոբ դպիր և ուրիշներ, որոնց վրձինի ստեղծագործությունները, իրենց նրանք և արվեստի ինքնուրույնությամբ, մեծ արթեք են ներկայացնում:

^{4.} «Հայաստանեայց Սկեղեցի», 1942 թ., № 1.